ՀԱՎԵԼՎԱԾ №2
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2007 թվականի դեկտեմբերի 21-ի №658Ն որոշման

ՆՈՐ ՍՊԱՌՈՂԻ ԿԱՄ ՍՊԱՌՈՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №____

_____ «----»----------200- թվական
(կնքման վայրը)

Նոր սպառողը կամ կառուցապատողը կամ սպառման համակարգը վերակառուցող սպառողը, այսուհետև՝
Պատվիրատու_____,
(անունը, ազգանունը, հայրանունը կամ ընկերության անվանումը)

ի դեմս
_____,
(անունը,ազգանունը, պաշտոնը)

որը գործում է _____հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մի կողմից, և Մատակարարը՝
_____,
(ընկերության անվանումը)

_____
(մասնաճյուղի անվանումը)

ի դեմս_____,
(անունը,ազգանունը, պաշտոնը)

որը գործում է_____հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. **Պայմանագրի առարկան**

1.1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարն իրականացնում է Պատվիրատուի սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել իր սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու համար:

2. **Կողմերի պարտավորությունները**

2.1 Մատակարարը պարտավոր է.

1¤ Պատվիրատուի դիմումի հիման վրա իրականացնել նրա սպառման համակարգի միացումը էլեկտրական ցանցին՝ Կողմերի միջև համաձայնեցված տեխնիկա-տնտեսական հիմնավորմանը համապատասխան.

2) Պատվիրատուի սպառման համակարգի միացումը էլեկտրական ցանցին ավարտել _____.

(օրը, ամիսը, տարին)

2.2 Պատվիրատուն պարտավոր է.

1) իր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացնելու համար վճարել միացման վճարը_____ դրամ՝ սույն պայմանագրի 3-րդ գլխում սահմանված կարգով.

2) Մատակարարին գրավոր տեղեկացնել ցանկացած փոփոխության մասին, որը կարող է ազդեցություն ունենալ միացման կամ միացման վճարի կատարման ժամկետների վրա:

3. **Վճարման կարգը**

3.1. Պատվիրատուն ամբողջությամբ վճարում է իր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարը՝ սույն պայմանագրի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետից առնվազն 1 աշխատանքային օր առաջ:

3.2. Պատվիրատուի սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացնելու համար, Մատակարարը կարող է սահմանել կանխավճար՝ բայց ոչ ավելին քան միացման վճարի 50 տոկոսը:

3.3 Սույն պայմանագրի 3.2. կետի համաձայն հաշվարկվող կանխավճարի չափն ու վճարման կարգը սահմանում են Կողմերը սույն պայմանագրի 6-րդ գլխում:

4. **Կողմերի պատասխանատվությունը**

4.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

4.2. Սույն պայմանագրի 2.1. կետի 2-րդ ենթակետի խախտման դեպքում Մատակարարը Պատվիրատուին վճարում է տույժ, որի չափը սահմանում են Կողմերը՝ սույն պայմանագրի 6-րդ գլխում:

4.3. Սույն պայմանագրի 3.1. կետի խախտման դեպքում Պատվիրատուն Մատակարարին վճարում է տույժ, որի չափը սահմանում են Կողմերը՝ սույն պայմանագրի 6-րդ գլխում:

5. **Լրացուցիչ պայմաններ**

5.1. Կողմերի միջև համաձայնեցված տեխնիկատնտեսական հիմնավորումը և միացման վճարի հաշվարկը կցվում են սույն պայմանագրին:

6.**Այլ պայմաններ (լրացնում են Կողմերը)**

6.1._____

_____

_____:

7. **Վեճերի լուծումը**

7.1. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջնորդությամբ:

7.2. Սույն պայմանագրի 7.1. կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

8. **Պայմանագրի գործողության ժամկետը և փոփոխման կարգը**

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև սույն պայմանագրի 2.1. կետի 2-րդ ենթակետով սահմանված պարտավորության իրականացման փաստացի ժամկետը:

8.2. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

8.3. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատվելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում Կողմերը պարտավոր են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

8.4. Սույն պայմանագիրը կարող է լուծվել Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

Կատարող՝	Պատվիրատու՝
գտնվելու վայրը _____	բնակության վայրը (գտնվելու վայրը)
ՀՀ _____	_____

հեռախոս_____

էլ. փոստի հասցեն_____

ֆաքս _____

գործունեության լիցենզիա N

ղեկավար

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

հեռախոս_____

էլ. փոստի հասցեն_____

ֆաքս _____

ղեկավար

_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ